

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆԳՐԱԴ

Սույն թվականի դեկտեմբերի 21—26 օրերին Մայր Աթոռի երեք նորընծաներ Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք աբեղաները Վեհափառ Հայրապետի բարեհաճ թույլտվությամբ այցելեցին Լենինգրադ՝ ծանոթանալու համար տեղի հոգևոր-եկեղեցական կյանքին, ինչպես նաև դիտելու պատմական կոթողները, հուշարձաններն ու թանգարանները:

Այցելության օրերին նորընծա աբեղաները մի քանի անգամ ներկա են լինում ռուսական եկեղեցական արարողություններին, հանդիպումներ ունենում Լենինգրադի հոգևոր ակադեմիայի տեսուչ Կիրիլ արքեպիսկոպոսի, ինչպես նաև ուսանողության և դասախոսական կազմի հետ, այցելում մի շարք գործող եկեղեցիներ:

Նրանք մեկօրյա շրջագայության են մեկնում հին Ռուսիայի կրոնական նշանավոր կենտրոններից մեկը՝ Նովգորոդ, այցելում տեղի պատմական հուշարձանները և թանգարանները, ինչպես նաև առաջնորդարան, որտեղ նրանց ընդունում և բարի գալուստ է մաղթում առաջնորդարանի քարտուղար Միխայիլ քահանան:

Ռուս եկեղեցու կյանքին մոտիկից ծանոթանալուն զուգահեռ, նրանք այցելում են նաև Էրմիտաժ, Ս. Իսահակի Մայր տաճար, Ռուսական թանգարան, Պետրո-Պավլովսկ ամրոց և այլն: Այս առթիվ նրանք այցելում են նաև Լենինգրադի հայկական գերեզմանատուն, որտեղ «Հոգւոց» են արտասանում հայ ննջեցյալների համար:

Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք աբեղաներին առաջնորդարանում ընդունում է Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Տ. Անտոնին և բարի գալուստ մաղթում նրանց, հույս հայտնելով, որ Աստուծո ողորմածությամբ և նման փոխադարձ այցելությունների շնորհիվ ապագայում էլ ավելի կսերտանան Հայ և Ռուս Եկեղեցիների հարաբերությունները: Ընդունելության ժամանակ Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք աբեղաները Անտոնի միտրոպոլիտին նախ փոխանցում են Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունը, ապա իրենց ջերմագին շնորհակալությունն են հայտնում ընդունելության համար:

Նրանք լավագույն տպավորություններով վերադառնում են Մայր Աթոռ: